

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Փ

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը ս. Պատրիարք Հօր ուղղած պաշտօնագրով մը կեներկայացնէ իր առաջարկները՝ Մայր Աթոռոյ և Պոլսոյ և Պատրիարքութեան հետ Կիլիկիոյ կաթողիկոսութեան յարաբերութեանց մասին: Ս. Կաթողիկոսը կառաջարկէ որ իր ձեռնադրած եպիսկոպոսները կատարեալ իրաւասութիւն ունենան պաշտօնավարելու Էջմիածնայ և Պոլսոյ Պատրիարքութեան թեմերուն մէջ, և փոխադարձաբար, որովհետեւ ինք իր կաթողիկոս նոյն իրաւասութեամբ կձեռնադրէ եպիսկոպոս, ինչ իրաւասութեամբ որ կձեռնադրէ Ս. Հայրապետն և երկուքին ձեռնադրածներն ալ միեւնոյն են, կըսէ: Ս. Կաթողիկոսն անհրաժեշտ չի համարիր եպիսկոպոսական ձեռնադրութեան, նաև Միւռոնի օրհնութեան առթիւ որ և է հրահանգ սպասել: Կառաջարկէ նաև որ իր անունն Ընդհ. Հայրապետին անունէն վերջ յիշատակուի պատարագի ատեն, Էջմիածնայ և Պոլսոյ պատրիարքութեան բոլոր թեմերուն մէջ, քանի որ կառաջարկուի իրեն Ս. Հայրապետին անունը յիշել Կիլիկիոյ թեմերուն մէջ: Ս. Կաթողիկոսը կառաջարկէ որ Պատրիարքարանի և Աղգ. Կեդր. Վարչութեան կողմէ իրեն տրուած «Ամենապատիւ» տիտղոսը վերապահուի երուսաղէմի և Պոլսոյ Ս. Պատրիարքներուն, նաև հրաժարեալ Պատրիարքներուն, որովհետեւ, կըսէ, այդ տիտղոսը Պատրիարքաց յատուկ է և ինք Կաթողիկոս մ'է: Կայտնէ որ Պոլիս դառնուած ժամանակ Պատրիարքարանի կողմէ խոստումներ եղան իրեն Վանքին նիւթական և ըսրոյական զարգացման մասին, ուստի կ'անդրէ որ այդ խոստումները լիովին զործադրուին: Ս. Կաթողիկոսը կըսէ որ թէև յարաբերական խնդիրներու համար կ'զիմէ Պատրիարքարան, սակայն, իրերու ընթացքով, ազատ կ'զգայ ինքզինքն հարկ եղած ատեն առանց Պատրիարքարանի միջնորդութեան ուղղակի գիմումներով վարել իր թեմին եկեղեցական-վարչական խնդիրները: Խառն ժողովոյ նկատառման յանձնուած ըլլալով այս պաշտօնագիրը, իր երէկէն նստին մէջ նկատելով որ յառաջագոյն այս մասին վարչական ծրագիր մը պատրաստուած և հաղորդուած է Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, Ս. Պատրիարք Հօր յանձնեց ըսնակցել Ս. Կաթողիկոսին հետ նոյն ծրագրին հիմանց վրայ, և կարևորն առաջարկել ի հարկին Աղգ. Կեդր. Վարչութեան:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը փետրվարի երկուրդ շաբթունայացելով Զոր-Մերզմէն, տեղւոյն եկեղեցիին մէջ հանդիսաւոր պատարագ մատուցեր ու քարոզ խօսեր է երկուեւ հաւատացեալներու խումն բաղմութեան մը ներկայութեան: Տեղւոյն ազգայինները որոշեր են իրենց վարժարանին իւր հաստիքները հալուած բաղնիք մը շինել 600 ոսկի ծախքով, որուն 400 ոսկին պատրաստ է արդէն: Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոս փետրվար 13-ին, իր հետևորդ վարդապետներով, այցելեր է Օճագլըն, Եօզէրլի և վարի թաղի եկեղեցիները. նաև գիւղին վերևը գտնուող գերեզմանատունը, ուր տեղական սովորութեան մը համեմատ, տօնավաճառ կազմուած էր: Իր այս այցելութեանը առթիւ, Ս. Կաթողիկոսը ծաղկեայ փիլոն կրելու արտօնութիւն շնորհեր է Զոր-Մերզմէնի Տ. Մեսրոպ քահանային և փետրվար 15-ին վերադարձեր է Սիս:

Սիսէն լուրեր, երէկ ծանուցինք Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին հովուական այցելութիւնն ի Զոր-Մերզմէն ու շրջականները: Ս. Կաթողիկոսին Սիս վերադարձին առթիւ հետևեալ տեղեկութիւնները կը ստանանք այս քաւառօտ.—«Փետրվ. 20-ին, Ս. Կաթողիկոսը մայրավանք վերադարձաւ. միաբաններէն Տ. Հրանտ, Տ. Մկրտիչ և Տ. Կիրակոս վարդապետները ու ծանօթ աշխարհականներ, ինչպէս նաև ազգ. ու ժառանգաւորաց վարժարանի աշակերտներն ու ժողովրդեան խումն բաղմութիւն ընդառաջ գացին դիմաւորելու: Փետր 24-ին, Ս. Սահակ Պարթևի տօնին առթիւ, մայրավանքի տաճարին մէջ պատարագ մատուց. Տ. Գիւտ վրդ.: Եկեղեցական արարողութիւններէն ետք, Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոս՝ իր անուան տօնախմբութեան առթիւ՝ ընդունեց շնորհաւորական այցելութիւնները՝ կառավարիչ Վսեմ Մուհարրէմ փաշայի, կառավարական պաշտօնատարներու, ծանօթ ազգայիններու, ինչպէս նաև Հռոմէականաց ու Հայ Բողոքական երեւելիներու: Միաբանութեան, ազգ. ու ժառանգաւորաց վարժարաններու ուսանողներուն և Հոգաբարձութեան կողմէ ուղերձներ կարդացուեցան: Ս. Կաթողիկոսը, այս առթիւ, շնորհաւորական հեռագիրներ ստացաւ Եջմիածնէն՝ Ս. Հայրապետէն և Կ. Պոլսոյ ու Երուսաղէմի Ս. Պատրիարքներէն, ինչպէս նաև Կիլիկիոյ թեմերու հոգևոր հովիւներէն:

«Նոյն երեկոյին վանքի ժառանգաւորաց վարժարանին տեսուչ Տ. Գարեգին վրդ. Խաչատուրեանի նախաձեռնութեամբ՝ կրօնային-գրական երեկոյթ մը սարքուեցաւ, որ մտերմական

հանգամանք մը ունէր. կը նախագահէր Ա. Կաթողիկոսը և ներկայ էին միաբան հայրերը. հանդէսը բացուեցաւ Տ. Պարեգին վարդապետի մէկ հակիրճ բանախօսութեամբ և շարականով մը: Երեկոյթը կը բաղկանար կրօնային-գրական արտասանութիւններէ, որոնք կընդհատուէին երգերով: Սոյն գրական հանդէսը որ մօտաւորապէս երեք ժամ տևեց, փակուեցաւ Ն. Ս. Օժու-թեան մէկ բանախօսութեամբը, որով օրուան կրօնային տօնը բացաւ: Եւ յետոյ, մասնաւոր շնորհակալութիւններ յայտնեց Տ. Պարեգին վարդապետին, որու անխոնջ ու անձնուէր զոհողութեանց շնորհիւ ժառանգաւորաց վարժարանը նախանձելի գիրք մը ունի այժմ, նաև ուսուցչական մարմնոյ և միաբանութեան, որ միշտ համակիր զգացումներ կը տածէ վարժարանի յառաջդիմութեան ու վանքի նիւթական բարւոյն ու բարեւաւման նկատմամբ:

Աթէնքէն Փետր. 25 թուականաւ կգրեն թէ տեղւոյն մատ-րան հոգաբարձութիւնը նկատելով որ ժողովուրդը չի կրնար քահանային թոշակն և մատրան 4,000 ֆրանկի պարտքն և կամ անոր տոկոսն հայթայթել, փակեց մատուոքը, մինչև որ կարող ըլլայ անոր պարտքն հատուցանել: Այս առթիւ խնդրած է Պատրիարքարանէն որ տեղւոյն հոգևոր հովիւ Տ. Պաւլիթ քահա-նային յարմար պաշտօնատեղի մը ցոյց տրուի. այդպիսի խնդիրք մ'ալ յիշեալ քահանան ըրած է, մէջ բերելով բաղմանդամ ըն-տանիքի մը տէր ըլլալը:

Պարիզի մէջ մեռած պրն. Անդրանիկ Իօնաթուրի կտակին վրայ նոր և վաւերական լուրերու նայելով, կտակով որը և ան-տէրունչ տղաքներու թողած է իր կէս միլիոն ֆրանքէ աւելի հարստութիւնը: Գումարին մէկ մասը պատրաստ արժեթուղթեր են, պահուած Օտենայի արքունի գրամատան մէջ: մէկ մասն ալ տոկոսով տրուած փոխառութեան, փոխարէնն ստանալով իբրև աւանդ՝ նայն անձերուն անշարժ կալուածները, որոնք ծախու հանուած են և աճուրդի պայմանաժամն ալ լրացած է: Այս գործերը վարելու համար Ռուսոստանի մէջ փոստաբան մը վարձած է, որ գործին կհետապնդէ: Նաև կթողու մեծահատոր աշխատութիւն մը, արդիւնը երեկունն արուստան արնութեան, բայց զժառանգաբար դեռ կիսատ: Այս գործին շարունակու-թիւնն ու հրատարակութեան բոլոր աշխատութիւնն յանձնա-բարած է ձեռնհաս քանասէրի մը, որ տպագրելի առաջին մասն իր քովն ունի և իր սրբագրութեամբ ու հսկողութեան տակ

պիտի հրատարակուին ըստ մասերն ալ: Գործը ճարտներէնի և հայերէնների համեմատութիւնը չէ միայն, այլ ըստ կենդանի և մեռեալ լեզուներու համեմատութիւնն հայերէնի հետ, որ կը կարծուի թէ նոր դուռ մը պիտի բանայ լեզուաբանութեան քառէն դէպի լոյս աշխարհ: Տպագրութեան համար 158,000 ֆրանք դրած է Քրետի Լիոնէի մէջ, և խնդրած է Ս. Պատրիարքէն, որ այդ գումարն իր գործին շարունակութեան և տպագրութեան միայն պէտք է յատկացնել: Միայն թէ ցաւալի է որ քոյր, քեռորդի, ևլն. ունենալով հանդերձ՝ բան մը չէ ձգած անոնց: Հանգուցեալն «հեռաւոր» ազգական չունի, այլ շատ մօտաւոր մէկը, քոյր մը՝ որ այրի է և կընակի Պոլիս: Հիմա քոյրը միջոցներ ձեռք առեր է կտակը ջնջել տալու և անվաւեր հռչակելու համար:

Քահանայական համեստ յորելեան մը տօնուեցաւ երէկ: Մայր եկեղեցւոյ աւագերէց և Կրօն. Ժողովի անդամ Տ. Միքայէլ Ա. քահ. Աշճեան իր քահանայութեան քսանհինգամեակը կը լրացնէր և այս առթիւ ծաղկեայ փիլոն կրելու արտօնութիւն կը ստանար Ս. Պատրիարք Հօրմէն: Տ. Միքայէլ Հայրը ընդունեց եկեղեցականներու և աշխարհականներու շնորհաւորութիւնները:

Թուլշայի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ երէց՝ Տ. Ղևոնդ քահ. Փափաղեան սկսած է տպագրել Աւետարանի Առակներուն մեկնութիւնը, գործ՝ իր շատ մը մեկնութիւններով ծանօթ Պետրոս արքեպիսկոպոս Աղամալեան Պերթումեանցի, գրաբար շարագրութեամբ: Տ. Ղևոնդ քահանայի ողջ հայերէն տպագրութեան մէջ ցոյց տուած գեղարուեստական ճաշակը գնահատուած է անցեալ տարի Պուքրէշի մէջ սարքուած Ռումանական Արուեստահանգէսին Գնահատիչ Յանձնախումբին կողմէ և արժանացած է արծաթ միտալի:

Թեքիրտաղի և Վանայ Առաջն. Տեղապահները Տ. Արիստակէս Արքազան և Տ. Ներսէս Ժ. վարդ. ներկայացան Ժողովին և իրենց հրաժեշտի ողջոյնը մատուցին և շնորհակալութիւն յայտնեցին այն վստահութեան համար՝ որով Ազգ. Կեդր. Վարչութիւնը պատուած էր ղիրենք յանձնելով այս կարևոր պաշտօնները և խնդրեցին Ազգ. Վարչութեան Աջակցութիւնը: Ժողովը յայտնեց թէ Վարչութեան աջակցութիւնը տպահովուած կընան նկատել և թէ յուսալից են որ իրենք ևս պիտի կատարեն անթերի իրենց պարտականութիւնը:

Կրօնական ժողովը եկեղեց. երգեցողութեանց Քննիչ Յանձնաժողով մը կազմած էր 4 քահանաներէ և 4 աշխարհականներէ, Ս. Պատրիարք Հօր առաջարկին համաձայն, այս ժողովի անդամներուն վրայ աւելցած են նաև ուրիշ երկու արուեստագէտ երաժիշտներ՝ Յարութիւն էֆ. Սինանեան և Աւետիս էֆ. Խորասանճեան: Կրօն. ժողովոյ այս որոշումը մասնաւոր գոհունակութեան արժանի է, որովհետև այժմ արեւելեան և եւրոպական երաժշտութեան կատարելապէս հմուտ անձերէ յանձնաժողով մը կազմուեցաւ այսպէսով, որոնք կը յուսանք թէ մեծապէս պիտի նպաստեն մեր եկեղեցական երգեցողութեանց կանոնաւորման:

Արմաշի Դպրեւանքը. Ուսեալ և ամուրի կղերականներ պատրաստելու համար ամենէն կարևոր Հաստատութիւնն է Արմաշի Դպրեւանքը, որուն նման կամ հաւասար կրօնական-ուսումնական հաստատութիւն մը ո՛չ երուսաղէմ և ո՛չ ալ Սի. ունի: Արմաշեան վարդապետներ այժմ թէ՛ թեմերու մէջ իբր առաջնորդ կամ տեղապահ, և թէ՛ մայրաքաղաքիս մէջ իբր քարոզիչ և Պատրիարքարանի ժողովի անդամ ու եկեղեցական պաշտօնեայ ըանիւ և գրչով կարևոր աշխատութիւններ կը կատարեն:

Արմաշի պէս կարևոր վանական-ուսումնական Հաստատութիւն մը Ս. Պատրիարք Հօր և Եղիշէ եպոս. Գուրեանի վերատեսչութեան ժամանակ շատ փայլուն շրջան մը անցուցած է: Այժմեան փոխ-վանահայրը իր նախորդներուն ուսումնական կարողութիւնը չունի, ըայց վանական-տնտեսական խնդիրներու կարգադրութեան նկատմամբ անոնց կրնայ հասնիլ փորձառութեամբ: Տ. Թորգոմ վրդ. աւելի յարմար է առաջնորդութեան քան վանահայրութեան:

Արմաշի վանքին և անոր շուրջ գտնուող վանական շէնքերուն մէջ պատասպարեալներուն թիւը այժմ 74 հոգիի կը հասնի: Ասոնցմէ 7-ը միաբան վարդապետներ են:

Տ. Թորգոմ Ժ. վ. Դուշակեան, փոխ-վանահայր և վերատեսուչ:

Տ. Մեսրոպ վրդ. Նարոյեան, Տեսուչ ուսումնարանի: Պարտաճանաչ, ջանասէր և ուսումնական վարդապետ մը, յայտնի արդէն իր գրական «Հարմար» անունով: Տ. Մեսրոպ վրդ. ամենէն աւելի անհրաժեշտ է ուսումնարանի համար:

Տ. Շաւարշ վրդ. Սահակեան, օգնական-տեսուչ. ընդունակ և խոստամտից երիտասարդ վարդապետ մը:

Տ. Պսակ վրդ. Տ. Խորէնեան, միաբան-ուսուցիչ:

Արմաշի վանքին մէջ ըստ պատուարեալները պահելու, վարժարանի և վանական կալուածներու ամբողջ ծախքերը հոգալու Դպրեմանուց Խնամակալութիւնը ամսական 6,500 դրշ. դրամ կը զրկէ փոխ-վանահօր: Խնամակալութեան կողմէ ուրեմն տարեկան 78,000 դրշ. կը զրկուի Արմաշ: Բացի այս ամսական դրամական նպաստէն, փոխ-վանահօր տրամադրութեան ներքե գրուած են նաեւ վանական կալուածներու հասոյթները, որոնցմէ ամենէն կարեւորն է 1. ջաղացքը, որ վանքին ալիւր կը հայթայթէ, 2. վանքին մշակելի հողերը, որ գիւղացիներէն կը վարձուին փոխարէն հացահատիկ տրուելով, 3. վանքապատկան անտառը, ուսկից վանքին անհրաժեշտ եղած վառելիքի նիւթերը (փայտ, ածուխ) շէնքերու համար դերան ու տախտակ կը հայթաթուի, 4. վանքի այլին ու բանջարանոցը, ուսկից միաբանութեան և աշակերտաց սեղանի խաղող, կեռաս, բանջարեղէն կը մատակարարուի, 5. վանքին սլխարի հօտը, որ մսեղէնի և կաթնեղէնի պատոյքները կը գոհացնէ:

Արմաշի վանքին դրամական հասոյթներու գլխաւոր աղբիւրներն են ուխտաւորութիւնք, որմէ մայիսին, յունիսին և սեպտեմբերին առնուազն 600—650 ոսկի կը գոյանայ, և շերամապահութիւնը, որմէ յաջող տարիներ մօտաւորապէս 150—200 ոսկիի գումար մը շահ կը մնայ: Քարակէօմբուկի եկեղեցին կամ «պղտիկ Արմաշ» նշանակելի արդիւնք մը չի բերեր վանքին: Այս հաշիւներէն կերևայ որ ուխտաւորութեան և շերամապահութեան յաջող տարիներու մէջ Արմաշի Խնամակալութիւնը բացառիկ ծախք մը ընելու հարկին ներքե չի գանաւոր: Մինչև այժմ Արմաշի պիւտճէն պակասող գումարները բարեօրոգար վճարած են հանգուցեալ Աբիկէֆ, և եղբայրը՝ Մաթուսէֆ. Ունճեան: Տասը տարիէ ի վեր Արմաշի ծախքերուն մայր-հաշիւ մը կազմուած չէ. ինչպէս կը լսենք Ս. Պատրիարք Հայրը տաղնամեայ մայր-հաշիւ մը պատրաստելու վրայ է այժմ: Ուսեալ, բարեկիրթ և պարտաճանաչ կրօնաւորներ պատրաստելու համար այժմ ըստ քրիստոնէական եկեղեցիները մեծ ջանքեր կընեն:

Յոյները Խելքի վարժարանը բարձրացնելու համար ջանք չեն խնայեր. կաթողիկէ և բողոքական համայնքներ մեծ գումարներ կը ծախսեն նոյն նպատակով: Արմաշը առ այժմ միակ դպրեմանքն է, ուսկից ուսեալ կղերականներ կը սպասենք: Եղած ծախքերը որքան ալ խոշոր երևնան, դեռ լիապէս չեն գոհացներ օրինակելի դպրեմանքի համար անհրաժեշտ եղող պիւ-


տոյքները: Այսքան դումարներ ծախսուելէն ետքը՝ իրաւունք ունինք յուսալու, որ Արմաշեան վարդապետներ իրենց եկեղեցականի վայել համեստ կեանքով աւելի կը սիրցնեն այդ հաստատութիւնը:

Երզնկայէն կը դրեն. «Վիճակիս Առաջնորդ Հօր քանիբուն գործունէութեան շնորհիւ՝ Առաջնորդարանի քոյր ժողովներն ալ կազմակերպուեցան: Քաղ. ժողովը ամէն շաբթու իր նիստը կը գումարէ կանոնաւորապէս. Ուսումնական Խորհուրդն ալ, որ քաղաքացիներուն ամէնէն դարգացած դասէն ընտրուած մարմին մըն է, լըջօրէն ձեռք առած է վարժարաններուն անկեալ վիճակին բարւոքման խնդիրը: Առաջնորդարանին պիտոճէն որ մինչև ցարդ անստոյգ վիճակ մը ունէր, գրեթէ կանոնաւոր ձև մը առնելու ճամբուն մէջ է:

Ս. Պատրիարք Հայրը, շաբաթ միջօրէին, Ազգ. Հիւանդանոց երթալով, նախ և առաջ այցելեց մանչերու Արհեստարան-Որբանոցն ի Գազլը-Չեշմէ և մանրամասնաբար աչքէ անցուց այդ Հաստատութեան ներքին վիճակը: Անցեալ տարի, աշակերտներուն թիւը 170 էր, մինչև այժմ բարձրացած է 220-ի: Արհեստանոցին սաները ամենէն աւելի յաջողակ են փայտի վրայ քանդակագործութեան և թիթեղագործութեան ճիւղերուն մէջ, և կարևոր ապուրանքներ կըլլան քանդակագործական կահերու, թիթեղեայ լոգարաններու և զանազան առարկաներու. ընդհակառակը, դերձակութիւնը և կօշկակարութիւնը անկեալ վիճակ մը առած են Արհեստանոցին մէջ և յանձնարարութիւնները շատ ցանցաւ: Ս. Պատրիարքը օրհնելով ու քաջալերելով սաներն ու ուսուցիչները, գնաց Հիւանդանոց և այցելեց աղջկանց Որբանոցը, որուն սանուհիներուն թիւը կը հասնի 130-ի. այնպէս որ, երկուսն սաներուն թիւը վերջին մէկ տարուան մէջ բարձրացած է 300-էն 350-ի:

12,000 ոսկիի կտակը, երկու ամիս առաջ դրեցինք որ 12,000 ոսկիի կտակ մը եղած է Ազգ. Հիւանդանոցին Եւրոպացեան կազմակերպի մը կողմէ: Այժմ կրնանք ծանուցանել թէ այս կտակն ընողն է Բարեկարգեանկ Տիկ. Թագւոր փաշա, դուստր Պետրոս ամիրայ Խորասանճեանի և քոյր հանգուցեալ Տոքդ. Խորասանճեան էֆ.ի: Բարեբարուհին մարտ 9-ին հրաւիրելով Բարեկարգեանկ հովիւ Տ. Վառամշապուհ Ա. քհնյ. Քիպարեանը, վաւերացնել տուած է կտակն և այնտեղ գանուղ Տեաք

Սպարթալեան, Մաքսուտ Ս. Մաքսուտեան և Միքայէլ Յարութիւնեան իրր լկայ ստորագրած են: Այս կտակուած գումարով Բերայի մեծ պողոտային լրայ տուներ պիտի շինուին և անոնց լարձքը իր կենդանութեան պիտի ստանայ բարերարութի տիկինը, և յետոյ պիտի յատկացուի Ազգ. Հիւանդանոցին: Կտակագիրը Պաարիարքարան զրկուած է, պաշտօնական գործողութիւնները կատարուելու համար, Տիկին Թագուոր փաշա իր ամուսնոյն մահէն լերջ ամուսնացաւ անգլիացի հարուստ ազնուականի հետ, ուրկէ մեծ հարստութիւն մը ժառանգեց: Իր նախորդ ամուսնէն ունի մանչ զաւակ մը Պօղոս պէյ: Ս. Պաարիարք Հայրն օրհնութեան գիր մը զրկեց որուն պատասխանեց բարերարութի Տիկինը շնորհակալութիւն յայտնելով:



ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Սուփաա Եպիսկոպոսի ի Սանկտ-Պետերբուրգ
Հայոց դպրոցների մասին (1885 ամի).

Բ.

Դեռ ևս չձեռնարկած արձանագրելու այն իրողութիւններ՝ որոնք յանձնառու եղանք դպրոցական մասին, դարձեալ անհրաժեշտ կարևոր ենք համարում դնել այս տեղ բառ առ բառ գերապատիւ Ներսէս սրբազան եպիսկոպոսի յանուն մեր ի 27 հոկտեմբերի և ի 29 նոյեմբերի արձակած նամակներ. որպէս զի ակն յայտնի նշմարուի գործոյն ստիպողականութիւն հանգերձ արտաքին հրահանգներով ըստ որոց ամենակարևոր էր դատուում յատուկ մարդ ուղարկել Սանկտ Պետերբուրգ. Այս օրերում ստանում ենք հրահանգող նամակներ և Տիփլիսից պարոն Սիմէանեանցից գրուած՝ որով նա զմեզ ապահովում է թէ՛ Կայսերական մայրաքաղաքում պատրաստ են արդէն հարցի յաջողութեան օգնել խորհրդով և գործով ինչպէս նորին